Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

04

LGA
1100

Книга должна возвращаться въ библіотеку въ такомъ видѣ, въ какомъ она была выдана, Въ противномъ случаѣ, если книга будетъ возвращена Библіотекѣ изорванною, перепачканною или съ вырванными листами и статьями, Библіотека не приметъ ея, и пріобрѣтетъ въ замѣнъ ея новую, на счетъ залога.

I/704

1

1082

1999

ОБЩЕДОСТУПНАЯ
ДЕШЕВАЯ
БИБЛИОТЕКА и ЧИТАЛЬНЯ
С. Б. Аргутинской-Долгоруковой
въ Тифлисѣ.

MASONIC LIBRARY

1380
Հայոց Բեկ

ՔՐԻՍՏՈՍ Ի ՎԱՍՏԻԿԱՆ

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԳՈՅԻ

ԼԷՕ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ Ա. ՀԱՔԻՄԵԱՆԻ

ԾԱԽԻՒՔ Գ. Ս. Ա.

Կբ/1861

ԳՈՐԾԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾ ԵՐՐՈՐԴԻ

ՏԵՍՈՒԹԻՒՆ.-ԳՐԱԳ.-ՀԱՆԹԵՐ.
Կ. Հ. Բարեգ. ընկեր.
12 ՅՈՒՆԻ 1898
Центр. Библіот.-Чит.
Арм. Благ. Общ.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՓԱՓԱԶԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՎԷՆԻՐ ԽԱՆ ԳԵՏՆԱՅԱՐԿ ԹԻՒ 40

— 1871 —

28. 1900

41100-60

ՔՐԻՍՏՈՍ Ի ՎԱՏԻԿԱՆ

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԳՈՅԻ

Հայկական ՍՍՀ Գիտ. Գրադարան
Գոս. Библиотека
ՀԱՍՍՀ—Арм. ССР
Գ. Մ. Ա. Մեսրոպի անվան Մատենադարան

Հայ. Հանրապետ. Գրադարան
Գրադարան
Թիֆլիս Հին 189 Նոր 1909 Тифл.
Основ. 189 нов. пер. 1909
Библиотека
Арм. Благотв. О-ва на Кавк.

ԿԵՆՏՐ.-ԳՐԱԴ.-ԸՆԹԵՐ.
Կ. Հ. Բ[illegible] ընկեր.
12 ՅՈՒՆԻՍ 1898
Центр. Библ. Общ.
Арм. Благ. Общ.

ՔՐԻՍՏՈՍ Ի ՎԱՏԻԿԱՆ

Օր մի Յիսուս, որչափ այլ զինք մեծարանք
Յաւիտենից առ Հայրն ունէր 'ի պատկառ,
Կը յօրանջէր սաստիկ երկնից մէջ, անանկ՝
Որ մաղ մընաց ծամելիքին խառնուէր լար։
Զինքն այդ փառաց օթևանին մէջ տաղտուկ
Շուրջ պաշարէր.—Յարքայութիւն թևապար՝
Երբեմն իրեն այն երգաբան ալելուք
Ճախրէին միշտ, իրեն ուղղեալ բայց չէին.
Մինչև անգամ կարելոյն չափ կլորտուկ
Պատարագն այլ լըփլրտելով զենուին,
Երբ մատուցողն ապահովել արտորար
Ախորժահամ նախաճաշկէ զիւր բաժին։—
Սպաս լաւագոյն չունէր Հոգին Սուրբ և Հայր։—

«Ի՞նչ, Քրիստոնեայքդ այդ մոռացկոտ զա՞նց առին,
Ըսաւ Յիսուս, արդեօք զիւրեանց խունկ բուրվառ.
«Եւ ուխտքն ինձմէ.— զոքա շատ իսկ կաթոգին
«Դիմեն առ կոյսն Մարիամ,— 'ի մատուռս
«Սրբոց յաղօթս յաճախէ խուռն ամբոխին,
«Ինչպէս երբեմն առ ոսկի կամ փայտեայ կուռս
«Գնայր Հեթանոսն աղօթաբեր նուիրական.
«Բայց ինձ համար անտեղի բան կարդէ դուրս։
Եւ սակայն ես 'ի Հռովմ ունիմ Սրբազանն,
«Իմ Փոխ—Աստուածս, ինչպէս համբաւ քարոզէ,
«Որ պարսի՛ մէջ ժողովրդոց անսասան

«Պահել զիմ վարկս, — արդեօք նա զիս կը մատնէ՞.
«Կաթողիկէ զուղղափառ կրօնս վաղեմի
«Կռապաշտութիւն մի՞թէ 'ի սպա՞ռ կը լափէ։
«Պէտք է իսկոյն 'ի Հռովմ երթամ, այդ տեղէ
«Քննեմ ընթացքն, և ըստուգեմ մեր գործին
«Ի՞նչպէս յիշեալ իմ փոխանորդս հոգ տանի,
«Եւ թէ պաշտօնն որ սեփհական իմ անձին,
«Արդեօք միայն իրեն համար չի գրաւե՞ց.—
«Արդ մերկանալ զմեր բնութիւնս երկնային
Պահանջէ հարկն, — առնունք պարկեշտ զայն հանդերձ
«Եւ կերպարան՝ յոր շուրջ գայի, Հրէաստան։
«Երբ փառք անձին Քաղաքապետրն սեպեց
«Զիս բևեռել 'ի փայտ խաչին կախաղան.
Ապա թէ ոչ գուցէ զիս չեն ճանաչեր։»

Ասաց, և փոյթ 'ի գործ վարպետն Ատուածեան
Ճախր առնելով բաղխեց ուժգին ըզթևեր,
Եւ մօտ հասաւ Վատիկանու, — հարց փորձի
Ելաւ թէ ո՞ւր բընակի Պապն, և կարծեր
Որ խաբէին զինք՝ երբ ցուցին պալատ մի։

«Բա՛ըէ, գոչեց, յախուռն մէջ երբ ծընայ՝
«Ամենևին ես գուշակել չ'կարէի,
«Իմ փոխանորդս յայսպիսի շէն ոնքանայ։»

Հանդերձ այնու ներս կը մտնէ. նախկին, բայց,
Քայլափոխէն՝ նիզակն 'ի ձեռս կորուսայ
Ոսկիազարդ պահանորդ մի.
«Տի՛ դու, կա՛ց,
Աղէ՛ ցոյց տո՛ւր մատուցագիրդ՝ որ պիտի
Ի մըտանել ընդ սեամն Պապին կայանաց։
«Ցըցունազարդ Սեպուհն անգամ կարօտի՝
«Երբ շընքագիր գայ այցելու Սրբազնին,
«Նորա յատուկ ըստորագրեալ հրամանի,

«Եւ կամ գոնէ Հազարապետ տան Տեսչին։
«Հոս կարծես որ կարող ըլլայ ողոքմուկ
«Մըտնել գրձուձ մի, որ չունի՝ գրպանին
«Նագարակիտ մի այլ՝ ինչպէս եմ ըստոյգ.
Գընա՛, ծառայն ծառայից Տեառն՝ քեզ նըման
Չի՛ զիջանիր ընդունելու մի գեղջուկ։»
Եւ գոցեց դուռն անմիջապէս իւր վրան։

Քրիստոս ապշած՝ մակաբերել չէր կըրնար
Որ այդպիսի շընորհաւոր պատասխան
Իրեն ուղղուէր — կարծեց սըխալ հասկընար,
Եւ հալածման գուցէ՛, կըսէր նա մտքէն,
Վերադարձեալ ատենք, և նոր մի Կեսար՝
Եւ թշնամի Քրիստոնէից դայր նորէն
Կառուցանել Հեթանոսացըն մեհեանք.
Եւ զմեր բանին այսպէս պարզեալ՝ ըստ իրեն
Շըքեղ Պահնակքն էին Սուրբ Հոր բանտապանք։—
Ի՛նչ պարզութիւն արտի . . . Քրիստոս՝ ինք միայն
Կըրնար ինկնալ մի յայդպիսի սըխալանք։

«Ցիսուսն եմ ես, որդեա՛կ, ըսաւ առ վարձկանն,
«Հոս տեսնելու եկած եմ զիմ նըւիրակ,
«Զոր ինքնակալն՝ Արամազդայ Ջերմեռանդ
«Անտարակոյս կամի զենուլ նահատակ,
«Եւ բանտարդել պահէ, ինչպէս պատահէր
«Ի հնուց նախկին Առաքելոցս այդ վիճակ։»

Պահնակն «Հայր մեր» մ'ամէն 'ի ժիր քրթմնջէր,
Թէև խեղճուկ կերպարանքէն և խոնարհ
Այդչափ պատուոյ զՏէրն արժանի չէր դատեր։

«Կը սըխալիս, Ցիսուս, Սուրբ Հայրն է Կեսար.
«Առ հասարակ պալատս է իւր բնակարան,
«Պահնակք 'ի պահ կան սոսկ անձին իւր համար.

«Փոխ—Աստուածէդ 'ի զատ առ այժմ հոս զընդան
«Ոչ ոք ունի, ուր նա քըմայն համեմատ՝
«Կ'արդիլէ զայնս որ հերձուածի կասկած տան.
«Նոցա բարւոյն 'ի սէր միայն խանդակաթ
«Եւ զպաշտամունս Քրիստոսական 'ի պատուել
«Նաև երբեմն 'ի կախաղան հանէ զմարդ։
«Ես բարեմոյն պահնակ մի եմ, և օգնել
«Քեզ կը բաղձամ. — ծառայներուն սեփհական
«Ահա սանդուղն—Հաղարապետ մեծին ե՛լ,
«Շողոմելով թէ թախանձես՝ Սրբազան
«Պապին դուցէ խօսիս.»

Յիսուս՝ այդ էրկին
Կարծէր ելնել Կայափայի յանդիման։

«Տե՛ս ինձ, կըճեայ 'ւ ոսկի պալատ կը բնակին»,
Սրմռաց Յիսուս, «և ընդ երէկըս մինչդէռ
«Զը դիտէի ես ո՞ւր հանգիստ իմ ճակտին։
«Ինքատն հոս բուն հանդէս աւրոդ մ'է սեպուեր,
«Ինքատ էի, սիրոյ ըսի խրատ յառակ,
«Եղո՛ւկ, 'ի խնամ անձիս ոչ այլ ոք հսկէր՝
«Բայց ձորձուս վրայ վիճակ հանող անառակք.—
«Դա՝ զմարդ կախէ. ես՝ կախուեցայ ըզփայտէն.
«Վըկա՛յ երկինք, թէ հոս դա իմ նըւիրակ,
«Խըրոխտ փառաքըն մեծապանծ՝ ապաքէն
«Դա շատ խակ իմ աղաւաղեալ է պատկեր։»

Այսպէս Յիսուս որոճալով ինքնիրեն
Ատիճանին արդէն գըլուխն էր հասեր,
Ուր ընդարձակ սըրահակի վրայ անհուն
Կայր դահլիճ լայն—Տէրըն կարծեց կը մտնէր.
Հրապարակ մի՝ շուկայ նիւթոց անանուն,
Փերեզակի կրպակ խարդախ՝ ուր գընող
Ապահով է միշտ յորդայթ ինկնալուն։

Հին ոսկրոտի , նոր միտալներ՝ ամէն կող
Հոտոտելեաց բերեն զըզուում և ցոլան .
Անթիւ ծառայք , արթուն , ամէն բան հսկող՝
Առասանաւ կապեն ծրարներ , 'ի սպաս կան
Յաճախորդացըն մըտադիր , ընդունին
Փայլուն «սկուդներ». — Հի՛շդ խանութի մի նըման ։
Իսկ կարմրազգեստ մեծաւորն այդ խուժանին
Ակնարկելով որ կը մտնար ներս մարդ մի
Վրան բաւական պատառոտի զգեստիւք հին ,
Զայրացաւ .

«Ի՞նչ, դատարկյաց մ'աղտեղի
«Այդպէս անհոգ ձևով Տիրոջն աչխարհիս
«Տունը մտնա՞յ . . . ո՛ զքեզ բերաւ յայս տեղի ,
«Ի՞նչպէս եկար . — բայց , գուցէ դու ակնունիս
«Մանր ինչ մեղաց Փոխ—Ատուածէն թողութեան ,
«Եւ յանցանացդ ապաշխարանք՝ կը շրջիս
«Զետ մուրացիկ — անսովոր չէ այդպէս բան ։ —
«Քեզ ի՞նչ պիտի , — ըսպանեցի՞ր մէկն արդեօք ,
«Եւ 'ի կասկած վտանգի դաշոյն իւր թիկան
«Գամեցի՛ր . — քո ծնողք սատակիչ ժանտ ձեռօք
«Խողխողեցի՛ր . — նրբահայեաց խորագէտ՝
«Պղծեցի՞ր քո աղջիկդ և քոյր — դըրամօք
«Ի Հռովմ ամեն տըկարութեանց հետքերէդ
«Մեք արձակեմք . — Խա՞չ կուզես , կամ մոմեղէն ,
«Եւ գուցէ Գա՞ռն Ատուծոյ , կամ սուրբ յաւէտ
«Վարդարաններ՝ քան Յիսուսի թէ ձեռքէն
«Օրհնեա՞լ ըլլար . — կը յօժարի՞ս մեծ պահոց
«Ուրբաթ շաբաթ օրերն ուտել մըսեղէն ։
«Արքայութեան բաղձա՞ս ամէն դաս Սրբոց
«Անգին մասունքըն հարազատ և վաւեր .
«Օ՛ն անդր ըստակ տո՛ւր , քըսակիդ պարպէ՛ ծոց ։
«Շնորհ մեծագոյն Ալըսորիոյ իսկ Կայսեր
«Հնար չէ լինի . թէ՛ չես ուզեր վրճարել ,

«Տի՛օն, ե՛լ շուտ, մէջ տեղը մի՛ խափաներ։
«Առանց կանխիկ դրամ առնելու չի յանձնել
«Մեզ պատուիրեալ է Պապական կոնդակաւ.
«Առ մե՛զ փարթամք՝ տնանկը տանի՛ Սադայէլ։ »

«Ի՛նչ պատուական գործ,» ինքնիրեն Տէրն ըսաւ,
«Ֆան ըզԴըպիրս Փարիսեցիս վաղեմի,
«Ամէ՛ն ասեմ, սրքա ամօթ չունին բնաւ։
«Զի՛ք Քրիստոնեայ հոս տեղ, ահա ստուգեցի.
«Շա՛տ է անուանս իմ նախատինքդ և ծանակ
«Որով զիւրեանց ծածկելով շահ ըզբուելի
«Թալլեն զխուժան լրբօրէն — տա՛ր օրինակ
«Սոցա ճամբուն ծայրն ո՞ւր կելլայ, հետևի՛նք։ —
«Աղէ՛, ես հոս քիչ վատնելու ժամանակ
«Ունիմ,» ըսաւ բարեպաշտիկ այն չնչինք
«Առ վաճառող ծիրանաւորն, «և տեսնալ
«Կ՚ուզեմ շուտով Քրիստոնէից Հայրըն . . .։

«Ի՞նք՝
«Սրբազանին խօսի՛ . . . ստահակդ հեգնէ՞ ալ.
«Հողաթափին խաչաղարդ, ո՛ ժանտաժուտ,
«Կարծե՞ս ուրեմն որ ծնրադիր համբոյր տալ
«Քեզ թոյլ տըրուի, — վա՛շ և փարգա՛ստ ցնորելոյդ.
«Ո՛չ, քեզ համար Պապը իւր ոտքն 'ի սօլեր
«Ո՛չ, չի՛ նեղեր . . . ե՛լ, կորսըուէ՛ շուտ և փոյթ,
«Թէ ճաշակել անմիջապէս չես ուզեր
«Խոր վիրապի համն անուշակ» . . .

«Քահանա՛յ.
«Մոլորութեանդ քօղն այլ կուզեմ փարատել.
«Այս աղքատիկ ձորձոց ներքև, տե՛ս ահա,
«Ծանի՛ր քո Տէրն, ես Յիսուսն եմ . . . ներելի
«Գուցէ հիմա տեսնել Սուրբ Հայրդ ինձ ըլլայ,
«Որ սուկ ինձմէ զիշխանութիւնն իւր ունի։»

«Դու Յիսուս, դո՞ւ . . . . զբաւարձալի է իրօք
«Կատակդ, և թոյլ տո՛ւր խնդամ . . . ինչ . . . Տէրն երկնի
«Ամենազօր՝ ա՛յդպէս ժժգոյն է դիմօք,
«Քո կերպարանքդ ունի՞ ողորմ, և շուրջ գայ,
«Փառաք խեղճութեանդ, ա՞յդպէս զազիր ցնցոտեօք,
«Ինչպէս միայն փսղոցքն յայնկոյս Տիբերեայ
«Կը տեսնըւին. — զընա՛ զուրիչս համոզել.
«Ճշմարտութիւն թէ բարբանջանքդ այլ ըլլայ,
«Մինչև Նորին Սրբազնութեան դէմ ելլել
«Չես կարող, — ինք՝ «Բէր Պաքքօ» ա՛յլ գործ ունի
«Քան ժամագիրք, երկինք, Քրիստոս մըտածել։
«Վրդովայոյզ, տե՛ս, Ռօմանեա տառանի,
«Եւ խռովութեան հովուն գաւառք ապատան,
«Աշխարհայինն 'ի մեր ձեռաց սրպըրդի
«Իշխանութիւն՝ որ է քան զայլ ամենայն
«Բարիս, կարծեմ, ընտրելագոյն. — վերջապէս
«Թէ ստոյգ Յիսուսն ես՝ ենթակայ արդ մերժման
«Լինելուդ սակ քո անձդ է հարկ մեղադրել.
«Ինչո՞ւ 'ի յայտ չե՞ս գար փառաց քոյ 'ի շրջան,
«Որ արժանի 'նդունելութիւն մի գտնես,
«Եւ ամենայն մեր թշնամեաց վրայ կոթող
«Կանգնէինք. — ի՞նչ ձև այլափոխ ես մըտած,
«Հալա՛ւ հագեր զետ սինլքդր մոնրացող։
«Ցանկեղեդ չոր այդպէս ծրագեալ մի Աստուած
«Պապն ամաչէ ճանչնալու, — թոյլ տո՛ւր, որ քեզ՝
«Սերտ բարեկամ, ուստի նեռեն 'դ դուռն 'ի բաց։»

Դէռ կը խօսէր ծիրանաւորն, և ինչպէս
Լեառն 'ի Թափոր՝ Յիսուս Քրիստոս զանձն յայտնէր
Պայծառակերպ, — խիտ ցաչացն հիւս բոցակէզ
Տանթէր փայլակ սուրբ ցասմանն որ բորբոքեց
Զինք ատենօք, երբ ըզծախողս վաճառաց
Սուրբ Տաճարին դաւթէն հեռու հալածեց։
Խրոխտ մաքսաւորքն՝ արդ վատաբար լըռակաց

Փոթորկին այն ակն ունէին, որ ահեղ՝
Փրկչին հոգւոյն մէջ մռընչելով՝ դուրս թնդաց։

«Վա՛յ, որոտաց Յիսուս, ո՛ քարքէց ցեղ,
«Խարդաւանողք լիրք հաւատոց եղբարց մեր.
«Վա՛յ Գահանայք Փարիսեցիք, որ շըքեղ
«Քրիստոնէի անուամբ պըճնեալք՝ զիմ դասեր
«Քօղարկէք դուք բիւր խեղկատակ 'ի պատրանս,
«Կռապաշտութեամբք պղծեալ զիմ սուրբ սեղաններ։
«Հա՞րկ ձեզ յիշեմ զիմ օրինաց պատուիրանս,
«Կոյրքդ՝ առաջնորդ կուրաց ինձմէ 'ի հեռուն.
«Մի՞թէ յիշե՞մ թէ սպառեցի ես զիմ կեանս
«Քարոզելով անդորր խաղաղ, քաղցրութիւն,
«Զդասս ներող բարս ողորմած, Սէ՛ր, Յո՛յս յԱստուած,
«Եւ ամենայն առաքինի յատկութիւն
«Ոյց այդչափ խուն նշմարք 'ի ձեզ են մնացած։
«Բարձրապատիւ և եռամեծ ողջունիլ
«Զինչ՛ երբէք 'ի հեզ պայման իմ կենաց,
«Ոսկեճամուկ և բեհեզեայ զգե՞ստ հագնիլ,
«Ուռճացընե՞լ զիմ դանձ քրտամբք աղքատին։
«Ո՞չ յաւանակ իշոյ հեծեալ 'ի տեսիլ
«Հանդիսաւոր ելի Սաղէմ քաղաքին.
«Մինչդեռ ամբոխն առհասարակ Հրեովմայ
«Նկատէ առանց ըզչարելու բընաւին,
«Ի յաղթանակ Քրիստոնէից ուստց վրայ
«Բարձեալ ձեր Պետն՝ և ոչ Նորա Սրբութիւն.
«Ի՞նչպէս թամբ սանձ դէս, հիացեալ միտք իմ կայ,
«Զանցուց խրատն դորա խիզախ խրոխտութիւն։—
«Օրինակիս այդպէս ահա զհետ կրթեալ
«Կան մեծարու իմ պատգամաց խրատուն։
«Ո՞վ ոք 'ի ձէնջ, առ հեզութեան, հեղ մըն ալ
«Զիւր պարեգօտն առնողին տուաւ բա՞րձ փետրեայ։
«Դուք հարիւրից ընտրէք զերկնից դանձըս տալ

«Վասն աշխարհիկ գանձուց զոր գող գողանայ .
«Սիրտք զօշաքաղ տէնչից եղած են խորանք ,
«Եւ առնելու ձեռք ձեր պատրաստ մշտակայ .
«Իսկ աղքատին աղեգորով պաղատանք
«Երբէք ըզձեզ չիշարժեցին գըթութեան : —
«Ո՛չ թէ երէցք՝ ըսպասարկու այլ վարձկանք ,
«Ո՛չ հովիւք՝ այլ մըսավաճառք , որ համայն
«Կաթն և միս՝ բուրդ ձեր տառապեալ ոչխարաց
«Ի բա՛ց խըզէք . — Եկեղեցի ուրիշ բան
«Ձեզ համար չէ՝ բայց երկրաւոր մի կալուած ,
«Եւ փրկութիւնն յաւիտենից և վերին
«Փառաց խընամ քիչ տագնապ տան ձեր մըտաց .
«Ոսկւոյ միայն կարօտ ունիք , մե՛ղ ոսկին ,
«Ոսկի՛ . . . այդ ձեր առած , և մեծ և միայն
«Եղեռն ըստ ձեզ՝ ելլալն աղքատ բոլորովին : —
«Մեղոյշ աչքեր , մեղբր շրթունք ձեր ծորան ,
«Սրտեն երեսք . . . լեղւով շաղուած են սրտեր ,
«Խիստք ուրիշին՝ 'ւ ակնաւոր ձեր թերութեան
«Թշնամանաց ներել երբէք չէք գիտեր :
«Ձեր ցանկութիւնն է ամէն տեղ երևիլ
«Նախամեծար , և մեծագոյնն 'ի մէջ ձեր
«Իմ ծառայից ծառայն պանծայ անուանիլ ,
«Բաբէ՛, սրտէ կոնդակի պէս . . . ի՞նչ հընար
«Հանուրց մշակին սոլերք պագնել խոնարհիլ :
«Թէ տարաբաղդ ոք համամիտ ձեզ չ'ելլար
«Եւ խորտակել ծանր ըզչղթայսն իւր ուզէ ,
«Զամէն օրէնս արդարութեան ոտնահար՝
«Զնա 'ի ճիրանս դահճին զայրոյթ ձեր մատնէ .
«Ոչ ողջակէզս՝ այլ ասացի , գըթութի՛ւն ,
«Զըրի տալ ինչ՝ որ ձրի ձեզ տըւեալն է :
«Դուք 'ի փրկանս դատապարտեալ ամբոխոյն
«Զմկրտութիւն ծախէք յաւուր ծընընդեանն ,
«Ծախէք մեղայ ներողութիւնն ապարդիւն .
«Սիրահարացըն իրաւունք պըտակման ,

«Եւ վաճառէք օրհասական հիւանդին
«Հոգեւորքի ևս իրաւունք . — հանգրտեան
«Պատարագի ծախէք պաշտօն մեռեալին ,
«Աղգականաց տարեդարձից քաւարան ,
«Ծախէք աղօթք , զՀաղորդութիւն 'ղ Անեղին
«Թիւ Պատարագ՝ ձայնաւոր , խաչ , վարդարան ,
«Եւ օրհնեանք—ձեզ՝ չիք ինչ բընաւ սրբանուէր ,
«Եւ վաճառիկ ապրանք է ձեզ ամէն բան ։
«Ցեկեղեցի ձեր չէ հընար քայլ մ՚առնել
«Առանց ըստակ մըտած ատենըդ տալու ,
«Ստակ ներտեղու , ըստակ նաև յաղօթել ։
«Խորանքդ եղեր հաշուոց սեղան , վաշխառու
«Տիեզերաց է մեծագնի Պապութիւն ։
«Իմ տուն՝ որ հոս Տուն Աղօթից՝ գողերու
«'Ի աւազակաց այրս ըրիք , ուր կանանուոյն
«Ինչպէս լըպիրշ զազիր տեղուանք ծախեն զսէր ,
«Ծախեն զԿուսին շնորհաց պարգևըս տըմոյն ։
«Բընաւք 'ի ձեզ զոգւոց ձերոց գարշ պատկեր
«Արտափայլեն , և նուազ քան զձեզ դըժընդակ
«Եւ խստասիրտք էին Դըպիրք , նախնիք ձեր .
«Գերեզմանաց իսկ բըռելոց չէք նմանակ ։
«Խարդախ վըճիռք , գողոնք , զբրկանք , նենգութիւն ,
«Պօրճեայք և ձեզ՝ բուռըն գրաւմունք օժանդակ ,
«Քաղաքանի ձեր հուշակէք թէ Սրբոյն
«Ժառանգութեան են ըստացուածք Պետրոսի ,
«Ուր ամէն մարդ հարկ է ձևէ մտածութիւնն
«Իբր աբեղայ՝ ոչ իբր ոգաստ քաղքըցի ։
«Մեղանչելն է նախատեսեալ յօրէնս ձեր
«Յանցուած՝ զոր բան իսկ դատապարտ գրէ պատժի ։
«Հըպարտութիւն , Ագահութիւն ձեզ ընկեր
«Ինչեն հոն տեղն , և կեղծաւորն և տխմար
«Զարդարութիւն հոն վաճառեն առընթեր .
«Հոն պարտք միայն՝ սողալ 'ղ առաջ ձեր խոնարհ .
«Եւ զայդ կոչէք աշխարհական դ.ոլութիւն ,

«Իշխանութիւն՝ զոր յերազ իսկ չէր ունեալ
«Իմ խեղճ Պետրոս . . . Ապաքէն դուք օգնութիւն
«Հայցէք յերկնից՝ ասակ զի իշխէք երկրիս վրայ ։
«Բայց ժամանակ նոր յաջորդեց հիներուն . —
«Քահանայից դառը լուծէն խոնջք ահա
«Վիճակք Պապին պիտի փշրեն զհին մակաւն .
«Ազատութեան ժպիտ ողջունէ զՌօմանեա ,
«Եւ ապըստամբ յարեալքն 'ի սէր վրդովման
«Հռովմայեցի ձեր հըպատակք , (նորոգած
«Թէ չէր զիւրեանց բռնաւորներ Գալլիան ,)
«Զեզ մեռասան յամաց 'ի վեր վըրընտած
«Էին արդէն ։ — Ո՛ քահանայքըդ Պապին ,
«Ո՛ ազգ լիժից , դողացէ՛ք . զարմն որդեկաց
«Գոյ աւարտել փորձըն զոր հարք փորձեցին ։ «

Կուլակաւոր ընպասարկուք՝ զարհուրեալ
Դէռ Քրիստոսի ձայնէն ապշած դողային ,
Մինչ ինք անմահ իւր արքունիքն էր դարձեալ , —
Նոյն օրն 'ի Հռովմ լուր խաղաց թէ Պօլօնեա
Քըշելով զիւր ծիրանաւոր կուսակալ ,
Դահէն մերժել էր զիւր Արքայն—Քահանայ .
Եւ վաղեմի իւր պատմութեան նոր փառաց
Պարծանք մի այլ աւելցնելով 'ի վերայ ,
Իշխանութիւն մի առժամեայ էր ընտրած ։

Լոնտրա Յունվար 1861

ԿԱՌՎ. ՀՕՍՈՍ ԲԵՆԵԴԻՐԹ. ԸՆԿ.
ԳՐԱԴԱՐԱՆ
ԹՐՔԱԼՈՅ ՀՐԳ. 1894 ՆՈՐՈՐԴ. 1909 Тифл.
основ. 1894 Тиов. пер. 1909
БИБЛИОТЕКА
Арм. Благотв. О-ва на Кавк.

144800 Հիսուն
ԿԵՆՏՐ.-ԳՐԱԴ.-ԸՆԹԵՐ.
Կ. Հ. Բարեգ. ընկեր.
12 ІЮНЬ 1898
Центр. Библиот.-Чит.
Арм. Благ. Общ.